Հայտարարություն

Մրցույթ՝ «ՀՀ Լոռու մարզի Ծաղկաշատի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի զինղեկի (0,5 դրույքաչափ), ՆԶՊ-ի (3 դասաժամ), ֆիզիկայի (4 դասաժամ), ռուսաց լեզվի (12 դասաժամ), հասարակագիտության (2 դասաժամ),աշխարհագրության (6 դասաժամ), ինֆորմատիկայի (3 դասաժամ), տեխնոլոգիայի (3 դասաժամ՝ տղաներ), ՀԵՊ-ի (3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
-դիմում (Ձեւ 1),
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև փետրվարի **10-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա **փետրվարի 15-ին՝ ժամը 15:00-ին,** ՀՀ Լոռու մարզի Ծաղկաշատի հիմնական դպրոցում. հասցեն՝ Լոռու մարզ, Ծաղկաշատ համայնք, 3-րդ փող., շենք 12:
Տեղեկությունների համար զանգահարել (099) 02-35-80 հեռախոսահամարով: